13207

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
Շրջակա միջավայրի նախարար
Հակոբ Սիմիդյան

«05» 10 2022թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 0149-22

Ձեռնարկողը՝ ***«Լեռնագործ» ԱԿ***
Գեղարքունիքի մարզ, գ. Գեղհովիտ

Գործունեությունը՝ ***Գեղհովիտի բազալտների հանքավայրի «Աղբյուրի գլուխ 1» տեղամասում 2022-2024թթ. ընթացքում կատարվելիք երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ***
Գեղարքունիքի մարզ

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի պարտականությունները կատարող՝ Խաչիկ Մարտիրոսյան

Առդիր եզրակացությունը՝ 5 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 0149-22

<< 05 >> 10 2022թ.

Գեղհովիտի բազալտների հանքավայրի «Աղբյուրի գլուխ 1» տեղամասում 2022-2024թթ. ընթացքում կատարվելիք երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ

Ներածական մաս.

Ձեռնարկող՝	«Լեռնագործ» ԱԿ
Փաստաթղթի տեսակը՝	Երկրաբանական ուսումնասիրության նախնական գնահատման հայտ (Գ կատեգորիա)
Գտնվելու վայրը՝	Գեղարքունիքի մարզ, Մարտունի համայնքի, Գեղհովիտ բնակավայր

Նախնական գնահատման հայտով նախատեսվում է 2022-2024թթ. ընթացքում կատարել Գեղհովիտի բազալտների հանքավայրի «Աղբյուրի գլուխ 1» տեղամասում երկրաբանական ուսումնասիրության աշխատանքներ: Նախատեսվող երկրաբանական ուսումնասիրությունը կատարվելու է «Լեռնագործ» ԱԿ-ի ֆինանսական միջոցներով:

Երկրաբանահետախուզական աշխատանքների նպատակն է պարզել տեղամասի թարմ բազալտների պիտանելիությունը՝ բլոկների, շինարարական խճի ու ավազի արտադրության 9479-2014 ԳՈՍ-ի, 8267-95 ՀՍ ԳՈՍ-ի և 8736–93 ՀՍ ԳՈՍ-ի տեխնիկական պահանջներին համապատասխանությունը:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասի, 2-րդ կետի ա. ենթակետի համաձայն նախատեսվող գործունեությունը հանդիսանում է Գ կատեգորիայի գործունեության տեսակ:

Նկարագրական մաս. Համաձայն նախնական գնահատման հայտի Գեղհովիտի բազալտների հանքավայրի «Աղբյուրի գլուխ 1» տեղամասը վարչական տեսակետից գտնվում է Գեղարքունիքի մարզի Մարտունու ենթաշրջանում և տեղակայված է Մարտունի-Վարդենյաց լեռնանցք-Գետափ ավտոմայրուղու աջ մասում, Գեղհովիտ գյուղից մոտ 3.0-3.2կմ դեպի հարավ, իսկ Մարտունի քաղաքից 9.0կմ հեռավորության վրա՝ 1.0հա տարածքում:

ՀՀ ԲՆՕՐՀԱՅԻՆ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ
ЭКСПЕРТНЫЙ ЦЕНТР ОЦЕНКИ ВОЗДЕЙСТВИЯ НА ОКРУЖАЮЩУЮ СРЕДУ
ENVIRONMENTAL IMPACT EXPERTISE CENTER
02543163
ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION OF EXPERTS
ՀՀ ԵՐԵՎԱՆ ՀՈ ՊՈԱԿ
РА ЕРЕВАН ГНО ГОСУДАРСТВЕННОЕ ОБЩЕСТВЕННОЕ ОРГАНИЗАЦИЯ
RA YEREVAN SNCO

«Աղբյուրի գլուխ 1» տեղամասի տարածքը գտնվում է 2235-2255մ բացարձակ բարձրությունների վրա: Լեռնագրական տեսակետից շրջանը տիպիկ լեռնային է, այն գտնվում է Գեղամա և Վարդենիսի հրաբխային ծագման լեռնաշղթաների միացման մասում: Հանքային դաշտը գտնվում է մեղմ թեքություններով (դեպի հյուսիս-հյուսիս-արևմուտք) սարահարթի վրա՝ Արգիճի և Մարտունի գետերի միջագետքում: Շրջանի գլխավոր ջրային զարկերակներն են՝ Արգիճի, Մարտունի, Վարդենիկ, Ջոլաքար, Ծակքար գետերը:

Շրջանի կլիման խիստ ցամաքային է, ցածրադիր մասերում հարթ անապատային և ալպիական չափավոր ցամաքային: Տեղումների տարեկան միջին քանակությունը կազմում է 500-700մմ: Ձմռան միջին ջերմաստիճանը (հունվարին) հասնում -14° C, իսկ ամռանը +25° C:

Ըստ նախնական հայտի երևակման տարածքում սողանքային երևույթներ չեն արձանագրվել: Մոտակա սողանքային մարմինները գտնվում են ուսումնասիրվող տարածքից ավելի քան 8կմ հեռավորության վրա:

Տուֆերի երևակման տարածքը գտնվում է Սևանի ֆլորիստիկ շրջանում: Գեղհովիտի բազալտների հանքավայրի տարածաշրջանը բնորոշվում է լեռնատափաստանային և մարգագետնատափաստանային բուսածածկույթով՝ տարախոտա-հացազգայինի խոտաբույսերի տարածմամբ: «Աղբյուրի գլուխ 1» բազալտի երևակումը գտնվում են Սևանա լճի ջրհավաք ավազանում՝ «Սևան» ազգային պարկի սահմաններից մոտ 9կմ հեռավորության վրա:

Համաձայն հայտի երկրաբանական հետախուզման տարածքում բույսերի և կենդանիների Կարմիր գրքերում գրանցված տեսակներ, բնության հատուկ պահպանվող տարածքներ, վտանգված էկոհամակարգեր, պատմամշակութային հուշարձաններ, անտառային տարածքներ չկան:

Համաձայն նախնական հայտի հայցվող տարածքի հողերի նպատակային նշանակությունը գյուղատնտեսական նպատակային նշանակության՝ արոտավայր է:

Գեղհովիտի բազալտների հանքավայրի «Աղբյուրի գլուխ 1» տեղամասի երևակումը ARM WGS-84 կոորդինատային համակարգով բնութագրվում է հետևյալ ծայրակետային կոորդինատներով՝

«Աղբյուրի գլուխ 1»		S=10049մ^2
1.	4437364.1	8523326.4
2.	4437477.2	8523379.7
3.	4437423.8	8523443.3
4.	4437318.6	8523405.8

Նախատեսվում է կատարել տեղամասի տարածքի 1:1000 մասշտաբերի տոպոգրաֆիական հանույթ 1.0049հա /մոտ 1.0հա/ տարածքում, բոլոր հետախուզական փորվածքների գործիքային տեղադրմամբ:

Համաձայն հայտի «Աղբյուրի գլուխ-1» տեղամասում նախկինում կատարված արդյունահանման արդյունքում ստեղծվել են արհեստական մերկացումներ, որոնց բնութագրման համար նախատեսվում է կատարել դրանց երկրաբանական նկարագրությունը: Ընդամենը նմուշարկվելու է 5 արհեստական մերկացումներ: Հորատանցքերը նախատեսվում է հորատել օգտակար հանածոյի մարմնի բազալտների շերտի լրիվ հզորության որոշման և նմուշարկման համար:

Աշխատանքներն իրականացվելու են սյունակային հորատման ուղղաձիգ հորատանցքերի հորատման միջոցով:

ՀՀ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՄՈՍ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ
ЦЕНТР ОЦЕНКИ ВОЗДЕЙСТВИЯ НА ОКРУЖАЮЩУЮ СРЕДУ
"ENVIRONMENTAL IMPACT EXPERTISE CENTER"
02543163
ՓՈՐՁԱԳԵՏԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION OF EXPERTS

Հորատումը կատարվելու է կարծր համաձուլվածքայի թագիկներով 112 և 93մմ տրամագծերով, ՈՒԳԲ մակնիշի ինքնագնաց հաստոցով:

«Աղբյուրի գլուխ-1» տեղամասում նախատեսվում է հորատել թվով 4 հորատանցք, (Հ-1 14մ, Հ-2 25մ, Հ-3 21մ և Հ-4 10մ) ընդամենը 70մ խորությամբ, բոլոր հորատանցքերը կենթարկվեն հանուկային նմուշարկման:

Լեռնային զանգվածից պիտանի բլոկների ելքի տոկոսի որոշման նպատակով նախատեսվում է մեկ փորձնական բացահանքի անցում 10x5x3մ չափերով՝ 150մ^3 ծավալով ընդհանուր չհողմահարված թարմ ապարներ:

Լրացուցիչ տարածքներ չխախտելու նպատակով փորձնական հանույթ կիրականացվի արդեն գոյություն ունեցող բացահանքից՝ էքսկավատորով:

Հորատման ժամանակ նոր ճանապարհների կառուցում չի նախատեսվում, կօգտագործվեն գոյություն ունեցող և դաշտամիջյան ճանապարները, կարգաբերելով դրանք:

Թարմ բլոկներից երեսապատման սալիկների ելքը որոշելու նպատակով նախատեսվում է փորձնական սղոցման ենթարկել մինչև 35.0մ^3 ծավալով կոպտամշակված տարբեր կարգերի բլոկներ: Ըստ հայտի փորձնական սղոցումը կիրականացվի Գեղհովիտ գյուղի մոտակայքում գործող սեփական քարամշակման արտադրամասում: Բլոկները քարամշակման արտադրամաս կտեղափոխվեն ավտոինքնաթափով:

Բազալտները նախատեսվում է ուսումնասիրել որպես երեսպատման և շինարարական խճի ու ավազի տացման հումք: Նմուշարկումն իրականացվելու է հորատանցքերի հորատահանուկից, արհեստական մերկացումներից և փորձնական բացահանքից:

Օգտակար հանածոյի ֆիզիկամեխանիկական հատկությունները որոշելու նպատակով նախատեսվում է.

- հորատահունուկի նմուշարկումը (սեկցիայի երկարությունը մինչև 5մ) իրականացնել անընդհատ տիրույթներով -14 նմուշ,
- քիմիական կազմը որոշելու նպատակով -2 նմուշ,
- քարաբանական կազմի ուսումնասիրություն - 2 նմուշ,
- համախառն նմուշ - 1 նմուշ 200կգ զանգվածով:
- Ընդամենը 19 նմուշ:

Նախատեսվում է 4 հորատման հարթակների հարթեցում՝ ընդհանուր 160մ^2 մակերեսով, միաժամանակ աղտոտումից պաշտպանելու նպատակով նախատեսվում է հողաբուսական շերտի /մոտ 0.2մ հզորությամբ/ հանում մեխանիկական եղանակով՝ 3-րդ կարգի ապարներում:

Ռեկուլտիվացիայի ենթակա հողերի ծավալը հաշվարկվել է 4 հորատման հարթակների 160մ^2 և փորձնական բացահանքի 50մ^2 մակերեսներից: Հողաբուսական շերտը վերականգնվելու է 0.2մ խորության վրա:

Վերականգնման ենթակա փորվածքների ընդհանուր մակերեսը կազմում է 210մ^2: Վերականգնումը կատարվելու է ձեռքով III-րդ կարգի գրունտներով: Ռեկուլտիվացիայի գումարը կազմում՝ 105.0 հազ. դրամ:

Աշխատանքների կատարման ժամկետները սահմանված են՝ 2022թ. 3-րդ եռամսյակից մինչև 2022թ. 4-րդ եռամսյակը:

Երկրաբանական ուսումնասիրության ընթացքում վերցված բոլոր նմուշների լաբորատոր հետազոտություններն իրականացվելու են հավատարմագրված, համապատասխան հավաստագրեր ունեցող լաբորատորիաներում:

ՀՀ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ
ՀՀ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐ

Գործունեության իրականացման ընթացքում բնառեսուրսներից օգտագործվելու է ջուր՝ խմելու և տեխնիկական նպատակներով, ջուրը կբերվի մոտակա բնակավայրերից պայմանագրային հիմունքներով:

Համաձայն հայտի մոտակա բնակավայրը գտնվում է 1400մ հեռավորության վրա, տարածքը կտրտված ռելիեֆով տարածք է, իսկ աշխատանքները կրում են կարճաժամկետ /2-3ամիս/ բնույթ ուստի կարելի է ասել, որ բնակավայրերի վրա ազդեցությունը կլինի չնչին:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ հորատանցքերի հորատումը և փորձնական հանույթն իրականացվելու են սեփական տեխնիկա-տրանսպորտային միջոցներով, որոնք տեղամասում կգտնվեն շատ կարճ ժամանակ, ուստի նախատեսվող ուսումնասիրության աշխատանքների ժամանակ, բացառվելու է բնապահպանական տեսակետից տարբեր վտանգավորության թափոնների (մեխանիզմների յուղեր, քսայուղեր, մետաղաջարդոն, անվադողեր) առաջացումը:

Դաշտային աշխատանքների կարճատև լինելու հանգամանքով պայմանավորված՝ մեխանիզմների շահագործումից առաջացած վնասակար ծխագազերի, հորատման ընթացքում առաջացող արտանետումները և աղմուկի մակարդակը չեն գերազանցելու սահմանային թույլատրելի նորմերը: Բուսական և կենդանական աշխարհի վրա հնարավոր ազդեցությունները լինելու են աննշան, քանի որ հորատման հարթակների կառուցման և փորձնական հանույթի կատարման աշխատանքները կատարվելու են բուսական ծածկույթից զուրկ տարածքում, կենդանիների և թռչունների բնադրավայրերից հեռու:

Նախնական գնահատման հայտով նախատեսվում է օդային ավազանի, հողային և ջրային ռեսուրսների աղտոտումից, բուսական և կենդանական աշխարհի պահպանման, թափոնների կառավարման, աղմուկի մակարդակի, արտակարգ իրավիճակների ռիսկի նվազեցմանն ուղղված բնապահպանական միջոցառումների ծրագիր և մոնիթորինգ:

Նախատեսվում է իրականացնել՝

- փոշենստեցման նպատակով՝ ջրցան,
- օգտագործվող տրանսպորտային միջոցների վրա արտաթորվող թունավոր նյութերի չեզոքացուցիչ սարքերի տեղադրում,
- Տարածքում աշխատող տեխնիկան լիցքավորել մոտակա լիցքավորման կայանում, բացառելով նավթամթերքների պահեստավորում տարածքում,
- հողի բերրի շերտի, պահեստավորում, աշխատանքների ավարտից հետո օգտագործում՝ լանդշաֆտի վերականգնման նպատակով,
- աշխատանքների ավարտից հետո խախտված տարածքների ռեկուլտիվացիայի իրականացում, հետ փռված ապարների փխրեցում և այլն:

Պատճառաբանական եզրահանգումներ. Նախատեսվող գործունեությունն իրականացվելու է տարածաշրջանում շինարարական նյութերի պահանջարկի բավարարման նպատակով: Երկրաբանահետախուզական աշխատանքների (դաշտային աշխատանքներ) կատարման ժամանակահատվածը լինելու է կարճատև և սեզոնային, ուստի ուսումնասիրության ընթացքում ազդեցությունները լինելու են ժամանակավոր և տեղային:

Փորձաքննության գործընթացում հայտը ներկայացվել է Գիտությունների ազգային ակադեմիայի Սևանա լճի պահպանության փորձագիտական հանձնաժողովին, համաձայն ներկայացված տեղեկատվության Գեղհովիտի բազալտի հանքավայրի առանձին տեղամասերում երկրաբանահետախուզական աշխատանքները, ընդհանուր առմամբ Սևանա լճի և Սևանի ջրհավաք ավազանի համար էական բնապահպանական ռիսկեր ունենալ չեն կարող: Սակայն լեռնարդյունաբերական գործունեության գումարային ազդեցությունը Սևանա

02543163
ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ЗАКЛЮЧЕНИЕ
ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION
OF EXPERTS

լճի էկոհամակարգի, ջրհավաք ավազանի և լանդշաֆտի վրա կարող է հանդիսանալ էական բնապահպանական ռիսկ: Քանզի հանքավայրի հետագա շահագործման վերաբերյալ ՀՀ ԳԱԱ Սևանա լճի հանձնաժողովը չի կարող երաշխավորել դրականա եզրակացության տրամադրում:

Փորձաքննության ընթացքում հայտը շրջակա միջավայրի նախարարության դիտողություններով ու առաջարկություններով լրամշակվել է: Օրենսդրությամբ սահմանված կարգով Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Գեղհովիտ բնակավայրում իրականացվել են հանրային քննարկումներ, որոնց ընթացքում տեղական ինքնակառավարման մարմինը և հանրությունը հավանություն են տվել նախագծի իրականացմանը: Փորձաքննական գործընթացին մասնակցել են նաև շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումները, արտակարգ իրավիճակների, առողջապահության, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունները, կադաստրի կոմիտեն:

Փորձաքննական պահանջներ

- Երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների ընթացքում պարբերաբար իրականացնել հողի, օդի, ջրերի, կենսաբազմազանության մոնիթորինգ, արդյունքները ներառել մոնիթորինգի պլաններում:
- Երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների իրականացման ընթացքում, անհրաժեշտ է խստագույնս հետևել նախնական գնահատման հայտում ամրագրված բնապահպանական միջոցառումների իրականացմանը, իսկ դրանց չբավարարման դեպքում նախատեսել լրացուցիչ միջոցառումներ՝ ապահովելով բնապահպանական բոլոր նորմերը:
- Ապահովել հայտում ամրագրված ռեկուլտիվացիայի աշխատանքների իրականացումը:
- Գործունեության և հարակից տարածքներում ՀՀ Կարմիր գրքում գրանցված բուսատեսակների կամ կենդանիների բնադրավայրերի հայտնաբերման դեպքում՝ անհապաղ տեղեկացնել լիազոր մարմնին:
- Առաջնորդվելով ՀՀ կառավարության 2002 թվականի ապրիլի 20-ի N 438 որոշման պահանջով, գործունեության իրականացման ընթացքում պատմամշակութային արժեք ունեցող կամ հնագիտական շերտերի հայտնաբերման դեպքում, անհրաժեշտ է դադարեցնել աշխատանքները՝ տեղյակ պահելով ոլորտը կարգավորող լիազոր մարմնին: Աշխատանքները վերսկսել լիազոր մարմնի թույլտվությունից հետո:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Լեռնագործ» ԱԿ-ի կողմից ներկայացված Գեղհովիտի բազալտների հանքավայրի «Աղբյուրի գլուխ 1» տեղամասում 2022-2024թթ. ընթացքում կատարվելիք երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերալ տրվում է դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ գլխ.մասնագետ՝ Արմինե Վարդանյան

02543163
ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ЗАКЛЮЧЕНИЕ
ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION
OF EXPERTS